բոլոր հիմքերին մինչև գիշերը պահելով, արձակեն նրանց գիշերվայ ժամը 12-ին կամ 1-ին ամենայն լապտերներին թող փոքրանն անցնել ոտով անցնելի ցեխով ծածկված փողոցների միջով։ Գուցէ ասում է նա, այդ «բերդերից» սոյ, կասարելապէս թաղալվելով ցեխերի մէջ մեր քաղաքային գեկավարները վերջապէս կը հասկանան թէ ինչ է նշանակում հարկերը պահանջել ժողովրդից, անգործ ասելանքներ նշանակել նրանց վրա եթէ փոքր ինչ հիշա՛ լեն վերաբերում, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ չանել նոյն հարկատու ժողովրդի համար։

—

ԹԻԼԻՍԻՆ փետրվարի 6-ից մեզ գրում են որ եղանակը այդ քաղաքում այժմ գարնանային է։ Լոր օրերս եկաւ թեթև ձիւն, բայց գարձեալ հալվել է։ փողոցները ցեխով ծածկվեցան։ Քաղաքի վանականոցի վրա ալիրի պուրը 2 բուրլ գնից իջաւ 1 բուրլ։ բրինձը ծախվում է 3 բ., գարին 70 կ., սուտարի, ոչխարի և խոզի միսը քիչաւոր 15 կ.։ Տեսական մեր վրա նշանակված է 11 կոպեկ, բայց ով է ուշադրութիւն դարձնում սահմանի վրա։ Յանկալի է իմանալ սահմանները թէ գնով են առնում միսը։

—

ՁԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են. «Լատինի Գաղութը, Բաղրատան և Կուսակալ գիւղերի լեզգիների խնամի մի նոր ապստամբութիւն է հնարել, որ նրա համար հարատևարար մի լաւ միջոց է դարձել։ Որպէս զի լեզգիների սերունդը բազմանայ, նա հրամայել է քանի մի տարի արանից առաջ, որ ոչ մի լեզգի այրի կին իրաւունք չունի անուսի մնալ, այլ պէտք է անպատճառ մարդու գնայ և ինքն ընտրի իր համար ամուսին, թէ կամ մի մարդուն որ արդէն 10 կամ 20 արիւ գանայք ունի։ Մարդն էլ իրաւունք չունի հրաժարվել այս կամ այն այրի կնոջ ի՛ մեռ ընդունելու և նրան իր հարիւրն աուելացնելու, իսկ եթէ համարձակվի հրաժարվել, թէկուզ պատճառելով որ իր նիրհական միջոցները չեն նեղում մի ուրիշ կին պահելու, պէտք է իրաքանչիւր չընդունված կնոջ համար 10 բուրլ վճարել իմամին։ Այդպէսով իմամը այժմ երկրի ամենաարագաւոր մարդ է դարձել։»

—

Լսում ենք որ անցեալ տարվայ վերջին ամիսներում Թիֆլիսի առաջնորդարանի մէջ հայոց հարաբերութիւնից յոգաւոր թիւրքաց Հայասանի ոստիկանների. հաւաքված 15.000 բուրլ գումարը այս գիրս ուղարկվեցաւ Ս. Զոլիա ս. Ց. Զէյթունի Հեռքով։

—

Հրատարակվեցաւ «Փորձ» հինգերորդ տարեշրջանի առաջին տետրակը, որ բովանդակում է իր մէջ հետևեալ նիւթերը։ I. Հայը և Հայաստանը ասպնների աչքում. հրապարակ. գասատեղ. Արդ. Յովհաննիսեանց։ II. Ս. Էջմիածնի նշխարանոցական սիմոնը և Ցանկասանի հայք։ III. Աղբարի երգ. բանաստ. Գասան Զաքարիայ։ IV. Շահէն վեպ. Գ. Գուշեանցի։ Հինգերորդ նոպիսական ժողովը Թիֆլիսում. Հանրս։ VI. Կայրելան գերդաստան. Դանիել։ VII. Ասան Լոդիս-Մելիքովի ասնմաբանութիւն. Ա. Երիցեան։ VIII. Ապր և Հայրենիք. Ա. Ց.։ IX Արշակ Ա. Գուկասով Ա. Ց.։ X. Իմ հեռատեսը. Հանհաս։ XI. Ցաղկաքաղ։ XII. Հրաւէր Միացեալ Ընկերութեան։ XIII. Նուիրատուութիւններ ի նպաստ Ռուբինեան աուսումնարանի։ XIV. Ցայտարարութիւններ։

—

«Փորձի» խմբագիր-հրատարակիչ Արզար Յովհաննիսեան խնդրում է մեզ ասել հետևեալ յայտարարութիւնը։ «Փորձի» տարեկան գինը 10 բուրլ է։ Նոյնպէս կարելի է ստանալ խմբագրատանից անցնելով չորս տարիների «Փորձի» տետրակները տարեկան 10 բուրլիով։ Գիմել խմբագրութիւնը կարելի է հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція Армянскаго журнала «Пордзъ».

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՄԱՍ ԿԱՐԼԷԼ

—

Լենգոնի լրագրները, յունվարի 6-ից հաղորդում են անգլիացի նշանաւոր գրագիրս և պատմաբան Թոմաս Կարլէյլի մահուան մասին, որը փախճանվել է Լենգոնում փետրվարի 5-ին։ Կարլէյլ Ծնվեցաւ 1795 թ.-ի դեկտեմբերին Դամֆրիսեան Լեռնաշխարհեան փոքրիկ գիւղի մէջ, Լիլէ-Ֆիշմեն։ Նրա ծնողները բաւական աւանդ գիւղացիներ էին և սկզբից նրան պատրաստում էին հոգևոր կոչման համար։ Կարլէյլ Լեդինբուրգեան համալսարանում սովորում էր աստուածաբանութիւն, իրաւաբանութիւն և նոր լեզուներ, որոնց իրաւում և գերմաներէն լեզուներ։ Կարլէյլ ծանր և լուռ բնաւորութիւն ունենալով, փախչում էր ազմուկից և հասարակութիւնից իր ցնորքներին բաւականութիւն տալու համար և ընկերների խաղերից և զուարճութիւններից գերազանում էր բանասանեցիների ընթերցանութիւնը և միայնակ զբոսանքը լեռների մէջ։ Երկու տարի պարապելով մասեմատիկայի դասատուութեամբ Յայֆիեան Լեռնաշխարհեան մէջ կոլլէջի մէջ, Կարլէյլ յայտնեց իր ծնողներին, որ հոգևորական կոչումն ընդունելու փոխանակ նա գիտաւորութիւն ունի գրականութեամբ պարապել։ Թամ 1822 թ.-ին Կարլէյլ պատկեց և Դամֆրիսից 15 մղոն հեռաւորութիւն ունեցող մի փոքրիկ կալուածքում հաստատեց իր բնակութիւնը։ Իր այս առանձնացած կալուածքից անգլիացի պատմագրը ուղարկեց իր առաջին յօդուածները Լոնդոնի, Ինլսոնի և երկու Ֆրանսերի մասին Բրիւսարի Էնցիկլոպեդիայում տպվելու համար 1823 թ.-ին։ Նա տպեց նոյնպէս գրականական մի քանի էսսէներ «New Edinburgh Review» ամսագրում։ Սի և նոյն տարում նա փոխադրեց Լէժանդրի երկրաչափութեան իր թարգմանութիւնը, որին կցեց նոյնպէս «Ցարաբերութիւնների մասին տրակտատ»։ 1825 թ.-ին Լեյպցիգ Լեդինբուրգում հրատարակեց «Գիլեմի Մէյստերի» թարգմանութիւնը, որով նա ուրիշ ունեցաւ գրագրութիւն սկսել Գէոթէի հետ «Գերմանական երկու հոգիներից մէկի հետ»։ միւս հոգին, Կարլէյլի ասելով Շիլլերն էր, որի կենդանագրութեան հրատարակիչով նա առանձնապէս զբաղեցնում էր։ Գերայշնայ երկու գրառութիւններից յետոյ նա հրատարակեց գերմանական վեպերի մէկ հաւաքածու («German Romances» 1827, 4 vol.) քսանաց գէօթէի, Ֆիխտէի, Գրիմների, Ֆուկէի, Մուզէուսի, Հոֆմանի և ուրիշ մատենագիրների հեղինակութիւններից։ «Sartor resartus»-ի հրատարակութիւնը, որը սկսեց տպագրվել «Frazers Magazine»-ում զարձրեց նրա վրա բոլորի ուշադրութիւնը։ Կարլէյլ յաջաջաբանում ասում է, որ այս գիրքը ինքը թարգմանել է գերմանական մէկ հին հեղինակութիւնից, որ հետևեալ վերնագիրն էր կրում. «Հագը, նրա ծագումը և նրա մանկութիւնը, հեղինակութիւն գոկտոր Դիոգենէս Տէյֆելդրոխի» և որ հրատարակված է մէկ անցյալ քաղաքում։ Այս գիրքը մէկ անխնայ կրիտիկ է անգլիական հասարակութեան դէմ։ Գիրքը մեծ յաջողութիւն ունեցաւ և նրա հեղինակին անուանեցին «Դարու ցէնցօր»։ 1840 թ.-ին հրատարակվեցաւ նրա նշանաւոր հեղինակութիւնը «Հերոսների մասին, հերոսների պաշտամունքի մասին և հերոսական մասին պատմութեան մէջ» (On heros, hero-worship and the heroic in history), որի մէջ Կարլէյլ յայտնում է իր քաղաքական սիստեմը։ Միայն հերոսն է պատճառում հասարակութիւններ կառավարելու իրաւունքը և հասարակութիւնների պարտաւորութիւնն է ճանաչել այդ հրաշալի էակին և կոյր հնազանդվել նրան։ Գրամվել և Նապոլէոն նկարագրված են որպէս հերոսական տիպեր։ Ամերիկացի ասել կը բռնէր յիշել նրա ճնացած քազմութիւ. թէ նշանաւոր և թէ անանուն գրուածքները, միայն պէտք է յիշել, որ նա 1860 թ.-ից մինչև 1864 թ.-ը հրատարակեց «Զատմութիւն Ֆրիդրիխոս II պրուսացոց թագաւորի», որի համար նա ստացաւ 1873 թ.-ին պրուսացոց pour le Mérite պատուանշանը։ 1865 թ.-ի նոյեմբերի 11-ին Կարլէյլ անդամութեամբ ընտրվեցաւ Լաղաստանի ակադ. Լենինբուրգեան հասարակութեան մասնաբաժնի բէկասոր։ Բացէ անաջոգ հանգամանքը այս պատուաւոր պաշտօնը ստանալու համար ներկայացաւ տարբերների առաջնորդ Դիզրաէլին։ 1875 թ.-ի դեկտեմբերին անգլիական թագաւորական բոլոր երեսի ներկայացուցիչները ներկայացրին նրան մէկ մեդալ նրա ուրախութեան համար։ Հասակից անցնելու համար։ Արևելեան պատերազմի ժամանակ 1877—1878 թ.-ին Կարլէյլ շատ անգամ իր գրեթէ յոգնածներով յարձակվում էր անգլիացի ռազմատացներին վրա և պաշտպանում էր Բալկանեան թերակղզու հալածված ազգութիւններին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի։ «Գոլոսն» լրագիրը հաղորդում է. պետական կայքերի մինիստրութիւնը, յայտնելով որ ժամանակ է Բուսատանի հարաւում սկսել խուզարկութիւններ հանքերի տեղերը գտնելու համար, խնդրում է գրամ որոշել հարկաւոր ծախսերը ծածկելու համար։

ԻՐԻՒԴ, 10 փետրվարի։ Մոսկվայի բարձրագոյն մանաւանդը, Մոսկվայի բարձրագոյն ընկերութեան պատգամաւորների ժողովը, Կիրմի, Օրենբուրգի և Իրիգի քաղաքային հասարակութիւնները, նոյնպէս և Գիրմի նահանգի զեմստվոյի ժողովը միանալով մի ընդարձակ կառավարութեան առաջ, որ երկաթուղու մի ճիւղ անցկացնվի Սարիցից դէպի Մայնինսկի գործարանները, Ալատիրովսկ, Իրբիտ և այլն։

ԼՈՆԴՈՆ, 10 փետրվարի։ Ս. Գոլոից փետրվարի 10-ից հեռագրում են. Երկու օտար պետութիւնների դեսպանները միաբերան բողոքութեան, բայց առանձին առանձին գրութիւններ ներկայացրին Բ. Դրանը, որոնցով յայտնում են, թէ ասացել են Բ. Դրան շրջաբերականը փետրվարի 14-ից։ Այս են յայտնում, որ Բ. Դուռը կը պահի իր խոստումները և Յունաստանի վրա չի յարձակվի, որ նա ունի ընդարձակ գիջումներ կանի, քան թէ խոստացել է հոկտեմբերի շրջաբերականով։ Դեսպանները յայտնում են, որ նրանց հրամայված է մանրակրկիտ բանակցութիւններին յունական խնդիրը լուծելու համար։ Բանակցութիւնների սկսելու մասին յայտնված է Յունաստանին և որոշ ասված է, որ Յունաստանը պատերազմական գործողութիւններ չը սկսի բանակցութիւնների ժամանակ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ձեռքն չէին խանգարում նրանց ուրախութիւնը, դի պատանը իրանք էլ չը գիտէին.

—Եոֆիս, հարցրեց երկց քրոջից միջնակ քոյրը Ֆեֆիլան, նրան մի կողմ տանելով,—այդ ծերը միշտ պիտի մնայ մեր տանը.

—Չեմ իմանում, պատասխանեց տառնութեամբ Եոֆիսն,—կարելի է մնայ, կարելի է գնայ. Ով է իմանում.

—Ես կուզէի, որ նա միշտ մեր տանը մնար, ասաց Ֆեֆիլան ժպտելով.—դու չէիր ուզի.

—Հոգեմ նրա գլուխը... ինչու է պէտք... պատասխանեց Եոֆիսն իր գեղեցիկ գէմքի վրա մի ծաղրական խոժոռ գրծելով.

—Միրուն ազատարդ է.

—Միրուն ազատարդ է, քեզ համար պէտք, ասաց Եոֆիսն, ձեռքի հինգ մատներով անենկատելի կերպով «մբնիկ հանելով» (*) դէպի Աղասու կողմը.

Մանկահասակ ազջիկներին յատուկ է իրանց առաջին սէրը արտայայտել արհամարհանքով. երբ գիւղացի հասարակ ազջիկան մի սիրային խոսք ես ասում և նա պատասխանում է քեզ բարկութեամբ կամ ապտակով, կարող ես այնուհետև վստահ լինել, որ նա ընդունելու քո առաջարկութիւնը։ Այդ կէտից պէտք է բացատրել Եոֆիսի արհամարհանքը դէպի Աղասին։ Սիրելեցի վայելչագեղ երիտասարդը արդէն իր վրա էր գրաւել ազջիկների և հարսների բարի ուշադրութիւնը. թէև նրանց ոչ մէկի հետ չէր խոսացել. թէև ինքը նրանց վրա ուշադրութիւն չը դարձնում.

Փոքրիկ անակի մէջ կեանքը հեռգնում ասելի ուրախ, ասելի բազդաւոր կերպարանք էր քաղանում Աղասու Գինքեանի որդիները, որոնք բէկի տանը ծառաների և ապատաւորների պաշտան էին կատարում. ասարտելով իրանց գործը սիրատանում կամ մարագում, այժմ նեկել, ընտանեբար շարվել էին կրակի շուրջը։ Մէկը տաքանում էր և խորին հոգեզմայլութեամբ սկանջ էր գնում կեղտոտներին նի գալու ձայնին, միւսը խորվվող փափուկների հոտովն էր հրապուրվում, երրորդը իր պատառոտած տրեխներն էր կարկատում, իսկ հինգերորդը մանր ասաղով մաքրում էր մի ժանգոտած հրացան։ Նրանց մօտ թաղվում էին մի խումբ կիսամերկ երեխաներ, պատառ-քնքեանի թառնիկները, մէկը ծուլորեն յարձակվում էր, միւսը նիրհում էր, իսկ մեռացածները, որ ասելի արթուն էին, աչքերը չուռած, ապուշ ապուշ նայում էին կաթառների վրա։ Խարոյկի մեղմ բոցերը պլպլում էին, լուսաւորելով այդ ամբողջ նախնական կացութիւնը որ իր պարզութեան մէջ կրում էր նահապետական կեանքի բոլոր վայելչութիւնները...

Բէկը լուռ մտախոհութեան մէջ թեք էր ընկած տաքոի վրա. նա, կարծես, չէր նկատում, թէ ինչ է կատարվում իր շուրջը։ Թեքը նեցուկ տալով գլխին, նա ընկղմված էր բարձի վրա և նրա միտքը սլացել էր հեռու, հեռու դէպի հարբենի աշխարհը։ Նա յիշում էր իր թշուառ մանկութիւնը, յիշում էր իր անբախտ, չքաւոր ծնողներին, յիշում էր այն բոլոր տանջանքը, այն բոլոր ցաւերի գանութիւնը, որ մաղում էր նրանց։ Յատրութեան մէջ անցուցած տան և հինգ տարին երևում էր նրան որպէս մի երազ, և քնից արթնացած մարդու նման, այժմ պատկերանում էր նրա մտքում միայն տխուր և վշտաբերով լի անցեալը, որ նա վարել էր հայրենական երկրում։ Նա կրկին վեր առաց հայրենական երգերի, վարդապետների, մելիքների, տանուտէրների գրած հանրագիրը, սկսեց նորից կարդալ։

Աղասին լուռ նստած էր տախտից ցած, յատակի վրա։ Նրա ուշադրութիւնը այժմ գրաւել էին երկու հարաները, որոնք տաշտի մէջ սիմնատրի ալիւրից խմոր էին հունցում, այդ խմորից գնդակներ էին շինում, և խարոյկի շիկացած ածուխները բաց անելով, գնդակները թաղում էին տաք մոխրի մէջ, կրկին ծածկում էին ածուխներով։ Անտեղ, մոխրի մէջ առանց այրվելու, եփվում էին գնդակները։ Դա այդ երկրի հաց թխելու ձեն էր, որ ոչ սակաւ զարմացնում էր Աղասուն, յիշեցնելով նրան իր հայրենիքի սովորակ, թարմ պէս բարակ լաւաշները, որ պատրաստվում էին թոնրի մէջ։ Ինչպէս ուտում են այս սեռակ հացը, մտածում էր Աղասին, այն ես այսպիսի տան մէջ։ Նա այժմ սկսեց նայել անենակի պատերի այն նակատի վրա, որ պատած էր պարսկական գորգով, որ կոզմամբ գրված էր և բէկի տախտը։ Այստեղ տեսարանը բաւական գրաւիչ էր։ Գաստի վրա կարգով քարշ էին ընկած զանազան տեսակ հին և նոր զէնքեր, զանազան տեսակ անօթներ։ Այնտեղ կարելի էր տեսնել երկաթէ մանր օգակներից հիւսված շապիկներ, որ գրեթէ տեղ էին գործածվում։ Այնտեղ կային պարսկական մաշակով շինված, հնազարեան տազավարաներ երկաթէ վոկատներով։ Այնտեղ կային վահաններ, նիզակներ, տատարներ, որ կրում էին վաղեմի ժամանակների արհեստի կոչումները։ Դրանց թեռում կարելի էր տեսնել և նոր ժամանակի զէնքերը։ Թրեր, տարճանակներ, հրացաններ, լեզգու խենջարներ, բոլորը բաւական գեղեցիկ և շքեղ կերպով պատրաստված։ Դրանց շարքում գեսեղված էին՝ ասիական եղջիւրներից շինված և արծաթով պատած գինու գաւաթներ, զանազան տեսակ շիրուններ, գունաւոր փայտից շինված գինու տարաներ, արտորդական փոքր, մի խոսքով բոլորը, ինչ որ կայացնում էր տան տիրոջ գլխաւոր հարստութիւնը։

Ամենակի մեռ պատերի վրա Աղասին տեսնում էր քարշ ընկած ասելի հատարկակ տարբերներ, որպիսիներն էին՝ ձիու սանձեր, թամբերի պարագայք, մարդկի կամ ձիաներ բռնելու առատանակներ (արկան), և գրանց թեռում կարելի էր տեսնել՝ մինը միւսի հետ կապված, խնցեղեն փոքրիկ թմբուկներ, գարիներ, որոնք մանկահասակ հարսների և ազջիկների երաժշտական սեպհականութիւնն էին։

Բէկը վերջացնելով հանրագրի կրկին ընթերցումը. դարձաւ դէպի Աղասին այդ հարցով.

—Դու այստեղ գալու ժամանակ Ֆաթալի խանը Ղափանումն էր. թէ մի ուրիշ տեղ.

—Խանը Ղափանում չէր, պատասխանեց Աղասին, սրատում ուրախանալով բէկի հետաքրքրութեան մասին,—նա գալու ժամանակ նա իր ցեղով անցել էր Արաքսը Ղարագաղի լեռների վրա ամառը անցկացնելու համար։

—Ի հարկէ, նա այնտեղ կը մնայ մինչև աշնան վերջը.

—Ի հարկէ. կը մնայ. խաշնարածները, մինչև ջուրը չը սառչի, չեն վերադառնում իրանց ամարանոցից.

Վերջին տեղեկութիւնները մի յուսադրական ուրախութիւն ազդեցին բէկի սրտին և նրա մի քանի բոպէ առաջ մառլված դէմքը փոքր ինչ պայծառացաւ։ Նա այժմ դատում էր այն հանգիստ բերկրանքի մէջ, որպէս մի մարդ, որ տեսնում է իր առջև նպատակ հանդամանքներ, որոնք կարող էին հանգնել ցանկալի նպատակին։

Նրա մտածութիւնները ընդհատեց մի ազմուկ, որ լսելի եղաւ դրսից։

(Կը շարունակուի)